ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՎԱՆԵՍԱ ՍՊԸ-ն ԱԲՆ-ԷԱՃԱՊՁԲ-26/74 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
4	Լվացքի մեքենա 1 /35 կգ տարողությամբ/	Լվացքի մեքենա 1 /35 կգ տարողությամբ/	ՉԺՀ	35 կգ տարողությամբ արդյունաբերական լվացող-քամող մեքենա Նոր, չօգտագործված, գործարանային արտադրության, առջևից բեռնվող, ավտոմատ կառավարմամբ արդյունաբերական լվացող-քամող մեքենա՝ նախատեսված հյուրանոցների, խնամքի ու բուժական հաստատությունների և մասնագիտական լվացքատների ինտենսիվ շահագործման համար: Գնի մեջ ներառվում են մատակարարումը, բեռնաթափումը, տեղադրումը, միացումը, գործարկումը, փորձարկումը, անձնակազմի ուսուցումը և երաշխիքային սպասարկումը: Սարքավորումը պետք է ունենա առնվազն 35 կգ չոր սպիտակեղենի անվանական բեռնատարողություն՝ արտադրողի կողմից նշված աշխատանքային պայմաններում: Թմբուկի օգտակար ծավալը՝ առնվազն 350 լ, քամման առավելագույն

					արագությունը՝ առնվազն 800 պտ/րոպե, քամման G-գործակիցը՝ առնվազն 350G՝ արտադրողի պաշտոնական տեխնիկական տվյալներով։ Տաքացման համակարգը պետք է լինի էլեկտրական՝ առնվազն 20 կՎտ տեղադրված տաքացման հզորությամբ։ Գազային կամ միայն գոլորշային տաքացումով սարքավորումը չի ընդունվում։ Էլեկտրասնուցումը՝ եռաֆազ 380–415 Վ, 50 Հց, պաշտպանիչ հողանցմամբ։ Մատակարարվող տարբերակը պետք է համատեղելի լինի տեղադրման վայրի էլեկտրական ցանցի հետ։ Լվացման և քամման ռեժիմների էլեկտրոնային կառավարումը պետք է իրականացվի հաճախականային փոխակերպիչով (VFD/inverter) կամ գործառութային համարժեք տեխնոլոգիայով։ Սարքավորումը պետք է ունենա սառը և տաք ջրի առանձին միացման հնարավորություն՝ արտադրողի նախատեսած չափերով և անհրաժեշտ միացման պարագաներով։ Ջրահեռացումը պետք է լինի արդյունաբերական արագ ջրահեռացման համակարգով, արտահոսքի ելքի տրամագիծը՝ առնվազն 60 մմ։ Կառավարումը՝ ծրագրավորվող էլեկտրոնային կամ միկրոպրոցեսորային՝ թվային կամ սենսորային ցուցադրմամբ։ Պետք է ապահովվի լվացման ժամանակի, ջերմաստիճանի, ողողումների, ջրի մակարդակի կամ ծախսի ռեժիմի, ինչպես նաև քամման արագության կամ տևողության կառավարում։ Սարքավորումը պետք է ունենա առնվազն երեք բաժին ունեցող ներկառուցված լվացող նյութերի դիսպենսեր կամ արտաքին դոզավորման առնվազն երեք ազդանշանային ելք։Անհրաժեշտ լրացուցիչ

					գործարանային մոդուլները պետք է ներառված լինեն մատակարարվող կոմպլեկտում: Ներքին թմբուկը պետք է պատրաստված լինի չժանգոտվող պողպատից կամ արտադրողի կողմից փաստաթղթավորված կոռոզիակայուն, հիգիենիկ համարժեք նյութից՝ գործվածքները չվնասող մակերեսով: Արտաքին բաքը և կրող կառուցվածքը պետք է նախատեսված լինեն արդյունաբերական օգտագործման համար, իսկ ջրի և լվացող նյութերի հետ մշտական շփվող տարրերը՝ կոռոզիակայուն: Լվացքի մեքենան կարող է լինել թրթռամեկուսացված (soft-mounted) կամ կոշտ ամրացմամբ (hard-mounted) կառուցվածքով: Սարքավորման տեղադրումը և ամրացումը պետք է իրականացվեն արտադրողի տեխնիկական պահանջներին համապատասխան: Կոշտ ամրացմամբ մեքենայի դեպքում մատակարարը պարտավոր է ներկայացնել հիմքի և ամրացման տեխնիկական պահանջները և ապահովել սարքավորման անվտանգ տեղադրումն ու շահագործումը: Սարքավորման արտաքին եզրաչափերը (լայնություն × խորություն × բարձրություն) պետք է լինեն համապատասխանաբար՝ լայնությունը՝ 1000–1450 մմ, խորությունը՝ 1100–1500 մմ, բարձրությունը՝ 1600–2050 մմ: Սարքավորումը պետք է լինի գործարանային սերիական համարով և արտադրության տարեթվի նշմամբ: Սարքավորումը պետք է ունենա դռան անվտանգ արգելափակման համակարգ, որը բացառում է բաց դռնով գործարկումը և աշխատանքի ընթացքում դռան վտանգավոր բացվելը: Պետք է ապահովվի անհավասարակշռության կամ

					ավելորդ թրթռման հայտնաբերում՝ քամման արագության ավտոմատ ճշգրտմամբ կամ անվտանգ կանգով, շարժիչի գերբեռնվածությունից և էլեկտրական տաքացման համակարգի գերտաքացումից պաշտպանություն, ջրի անբավարար մակարդակի պայմաններում վտանգավոր տաքացման կանխարգելում, արտակարգ կանգառի գործառույթ, սխալների ախտորոշում կամ կոդերի ցուցադրում, ինչպես նաև էլեկտրամատակարարման ընդհատման դեպքում անվտանգ աշխատանքային վիճակ։ Սպասարկման ենթակա հիմնական հանգույցները պետք է հասանելի լինեն արտադրողի տեխնիկական սպասարկման ցուցումների համաձայն։ Մասնակիցը պետք է ներկայացնի առաջարկվող սարքավորման տեղադրման տեխնիկական պահանջները, փաստացի եզրաչափերը, քաշը, ընդհանուր տեղադրված էլեկտրական հզորությունը, պաշտպանիչ ավտոմատի, էլեկտրական և ջրային միացումների տվյալները։ Մասնակիցը պարտավոր է ներկայացնել արտադրողի կողմից տրված լիազորագիր (Manufacturer’s Authorization Form՝ MAF) կամ արտադրողի պաշտոնական դիստրիբյուտորի կամ դիլերի կողմից տրված լիազորագիր (Distributor/Dealer Authorization Form՝ DAF), որով կհաստատվի մասնակցի իրավասությունը՝ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում առաջարկելու և մատակարարելու նշված ապրանքանիշի ու մոդելի սարքավորումը։ DAF ներկայացնելու դեպքում պետք է նաև փաստաթղթերով հաստատվի լիազորագիր տրամադրողի՝ արտադրողի

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ВАНЕСА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱԲԸ-ԷԱՃԱՊՁԲ-26/74 ниже представляет полное описание предлагаемого им товара:

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
4				համապատասխանությունը սարքավորման պահանջներին: Մատակարարը պարտավոր է ապահովել մեքենայի բեռնաթափումը, տեղադրումը, հարթեցումը, անհրաժեշտության դեպքում ամրացումը, էլեկտրական և ջրային միացումները՝ արտադրողի տեխնիկական ցուցումներին համապատասխան: Բոլոր նշված աշխատանքներն ու անհրաժեշտ միացման պարագաները պետք է ներառված լինեն առաջարկի ընդհանուր գնի մեջ: Տեղադրումից հետո պետք է իրականացվի առնվազն մեկ ամբողջական փորձնական ցիկլ՝ դատարկ և աշխատանքային բեռնվածքով, ներառյալ լվացման, տաքացման, քամման, ջրահեռացման և անվտանգության համակարգերի ստուգումը: Մատակարարը պարտավոր է պատվիրատուի առնվազն երկու աշխատակցի կողմից համապատասխան լիազորություն ունենալու հանգամանքը: Լիազորագիրը պետք է պարունակի առաջարկվող սարքավորման արտադրողի, ապրանքանիշի և մոդելի տվյալները, ինչպես նաև հաստատի սարքավորման երաշխիքային սպասարկման և անհրաժեշտ պահեստամասերի տրամադրման ապահովումը: Մատակարարը պատասխանատու է պայմանագրով նախատեսված տեխնիկական և երաշխիքային սպասարկման պաշտոնաթղթերի կատարման համար: Մինչև տեղադրումը մատակարարը պատվիրատուի մասնակցությամբ պետք է ստուգի տեղադրման վայրի էլեկտրասնուցման, ջրամատակարարման, ջրահեռացման, հատակի կամ հիմքի և սպասարկման տարածքի

				անցկացնել գործնական ուսուցում և կազմել տեղադրման, փորձարկման և շահագործման հանձնման համապատասխան փաստաթղթեր: Սարքավորման ամբողջական երաշխիքային ժամկետը պետք է կազմի առնվազն 12 ամիս՝ շահագործման հանձնման ակտի ստորագրման օրվանից: Երաշխիքով ընդգրկված անսարքությունների վերացման համար անհրաժեշտ աշխատանքի, պահեստամասերի և մասնագետի այցի ծախսերը կրում է մատակարարը: Խափանման մասին հաղորդման ընդունումը պետք է հաստատվի առավելագույնը մեկ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ անհրաժեշտության դեպքում մասնագետի այցը պետք է կազմակերպվի առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում: Մատակարարը պարտավոր է ՀՀ տարածքում կազմակերպել տեխնիկական սպասարկումը, վերանորոգումը և անհրաժեշտ պահեստամասերի ձեռքբերումը՝ սեփական կամ պայմանագրային սպասարկման ռեսուրսներով: Սարքավորման հետ պետք է տրամադրվեն շահագործման հիմնական ցուցումները՝ հայերեն, ռուսերեն կամ անգլերեն, արտադրողի տեղադրման և տեխնիկական սպասարկման ձեռնարկը, միացման սխեմաները՝ հայերեն, ռուսերեն կամ անգլերեն, ինչպես նաև երաշխիքային ու կիրառելի համապատասխանության փաստաթղթերը: Սարքավորման ընդունումն իրականացվում է մատակարարված մոդելի, սերիական համարի, կոմպլեկտավորման, տեխնիկական ցուցանիշների և գործնական փորձարկման արդյունքների հիման վրա: